ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻՑ

ՍԱՂՄՈՍ Ա

1.—Երանելի է այն մարդը,
որ չհետևեց ամբարիշտների խորհրդին
և չգնաց մեղավորների ճանապարհով
և չնստեց չարակամների աթոռին:
2.—Այլ, նրա կամքը Տիրոջ օրենքներն են
և նրա օրենքների մասին է խորհում գիշեր ու ցերեկ
3.—և նա ջրի հոսանքի մոտ տնկված ծառի է նման,
որ իր պտուղը ժամանակին կտա
և նրա տերևը չի թափվի
և ամեն ինչ որ կկատարի,
կհաջողվի նրան:
4.—Բայց այդպես չեն ամբարիշտները,
ո՛չ, այլ նման են փոշու, որ քշում է քամին
և ցրիվ տալիս երկրի վրա:
5.—Դրա համար ամբարիշտները
չեն կանգնելու դատաստանի առաջ,
ոչ էլ մեղավորները՝ արդարների խորհրդում,
6.—որովհետև Տերը ճանաչում է
արդարների ճանապարհը,
բայց ամբարիշտների ճանապարհները կկորչեն:

ՍԱՂՄՈՍ Բ

1.—Հեթանոսները ինչո՞ւ խռովեցին
և ժողովուրդները խորհեցին ընդունայն,
2.—երկրի թագավորները խորհրդի ելան
և իշխանները հավաքվեցին ժողովի
Տիրոջ և իր Օծյալի դեմ:

3.—«—Խզե՛նք նրանց կապանքները
և թոթափենք նրանց լուծը մեզանից»:
4.—Երկնքում բնակվողը ծիծաղելու է նրանց վրա
և Տերը արհամարհելու է նրանց:
5.—Այն ժամանակ նա խոսելու է նրանց հետ
իր բարկությամբ
և խռովեցնելու է նրանց
իր սրտմտությամբ:
6.—«—Ես թագավոր կարգվեցի նրա կողմից՝
Նրա Սիոն սուրբ լեռան վրա,
հռչակելու համար հրամանները Տիրոջ»:
7.—Տերն ասաց ինձ.
«—Դո՛ւ ես իմ որդին
և ես այսօր ծնեցի քեզ.
8.—Խնդրիր ինձանից
և քեզ հեթանոսներին ժառանգություն կտամ,
և իշխանություն՝ երկրի բոլոր կողմերում:
9.—Պիտի հովվես նրանց երկաթյա գավազանով,
որպես բրուտի անոթ պիտի փշրես նրանց»:
10.—Ա՛րդ, ո՞վ թագավորներ, խոհեմացեք,
և դո՛ւք, երկրի դատավորներ, խրատվեցե՛ք,
11.—երկյուղով ծառայեցեք Տիրոջը
և դողալով ցնծացեք նրա առաջ,
12.—ընդունեցեք նրա խրատը,
որպեսզի Տերը չբարկանա
և դուք չկորչեք
արդարության ճանապարհներից,
որովհետև նրա բարկությունը
այն ժամանակ զարհուրելի կլինի:
13.—Երանի՜ նրանց, ովքեր իրենց հույսը
Տիրոջ վրան են դրել:

ՍԱՂՄՈՍ Գ

1.—Սաղմոս Դավթի
2.—Տե՛ր, որքա՜ն շատացան ինձ նեղողները
և շատերը իմ դեմ ելան:
3.—Շատերն իմ մասին ասացին,
թե՝ սրա համար չկա՛ փրկություն իր Աստծո մոտ.
4.—բայց դո՛ւ, ո՞վ Տեր, իմ օգնականն ես,
իմ փառքն ես և գլուխս բարձր պահողը:
5.—Ես աղոթեցի Տիրոջն իմ ձայնով
և նա լսե՛ց ինձ իր սուրբ լեռից:
6.—Ես պառկեցի և քնեցի,
արթնացա, և Տերը իմ պահապանն է.
7.—ես չեմ վախենա նրանց բյուրավոր զորքերից,
որոնք շուրջս բոլորած՝ պաշարել են ինձ:

8.—Արի՛, Տեր, և փրկի՛ր ինձ, ո՞վ իմ Աստված,
որովհետև դու հարվածեցիր բոլորին,
ովքեր թշնամի էին ինձ առանց պատճառի,
և մեղավորների ատամները կփշրես:
9.—Տիրոջից է փրկությունը.
Քո օրհնությունը
թո՛ղ քո ժողովրդի վրա լինի:

Թարգմ.՝ Ա. Ե.